ՆԵԼԼԻ ԲՐՈՒՏՅԱՆ

ՕԺՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սովորաբար օժտված երեխաների թվին են դասում նրանց, ովքեր խելացի, կողմնորոշվող ու տրամաբանող են: Ուստի պատահական չէ, որ երեխաների օժտվածության ուսումնասիրությունները, որոնք թերևս սկսվել են 20-րդ դարի առաջին տասնամյակից, շեշտը դրել են հենց մտավոր ունակությունների և դրանց առանձնահատկությունների բնութագրման վրա: Այդ ժամանակների ուսումնասիրությունները հիմնականում ուղղված էին օժտվածության վրա ազդող գործոնների (սոցիալական, ազգային, դաստիարակչական և այլն) ուսումնասիրմանը: Դժբախտաբար 30-ական թվականներին օժտվածության նման ուսումնասիրությունները դադարեցվեցին: Այն ժամանակ ճիշտ էր համարվում այն համոզմունքը, որ բոլորը «հավասար» են: Գերակշռում էր հիմնականում միջին կարողությունների տեր երեխաների վրա ուշադրությունը կենտրոնացնելու մոտեցումը: Այսպիսով, շատ խրթին իրավիճակ էր ստեղծվել: Առաջին հերթին օժտված երեխաները դուրս էին մնացել ընդհանուր ուսումնասիրությունների շրջանակից, երկրորդն էլ, նման երեխաների իրական հնարավորությունները, դրանց հետագա ծավալմանն ու բարգավաճմանը նպաստող գործոնները չէին կարող այլևս լինել բազում հետաքրքրասեր ուսուցիչների ու շահագրգիռ ծնողների ուշադրության կենտրոնում, այնինչ օժտվածության երևույթը ինքնին կարևորագույն ու մանրազնին ուսումնասիրության կարիք ուներ: Վերջին տարիների ընթացքում մոտեցումները էապես փոխվել են: Օժտված երեխաների գաղափարը կեղծարյա ընդմիջումից հետո այժմ արդեն շատ **արդիական** է, քանի որ օժտված երեխաները ինչպես ծնողի ու մանկավարժի, այնպես էլ հասարակության, ինչու չէ նաև պետության աջակցության ու օժանդակության կարիքն են զգում, օժտված երեխաների պահանջակը գնալով աճում է, քանզի մեր օրյա իրականությունը էապես զգում է խելացի, տաղանդավոր ու ինտելեկտուալ երեխաների կարիք:

Ուստի, մեր աշխատանքի **նպատակն** է ուսումնասիրել օժտվածության դրսևորման առանձնահատկությունները երեխաների մոտ, պարզել, թե ինչպիսի գործոններ են ազդում օժտվածության երևույթի վրա:

Շատ հետազոտողներ այն կարծիքին են, որ օժտվածությունը անհատի որակների յուրահատուկ դրսևորումն է, որոնց կենտրոնում ինտելեկտն է, որն օժտվածի մոտ ավելի բարձր ու զարգացած է, քան իր տարեկիցների մոտ: Այուս խնդիրը կապված է օժտված երեխաների նախասիրությունների ուսումնասիրության հետ, քանի որ օժտվածների մոտ շատ հաճախ ուսման հետ կապված պահանջկոտությունը, նոր ու հարստացված գիտելիքներ ձեռք

բերելու անհագ ձգտումը երբեմն ցավալի հետևանքներ է ունենում: Հանուն նոր գրքի, նոր ինֆորմացիայի, պարապունքի ու գիտելիք ձեռք բերելու նոր հնարավորության օժտված երեխան պատրաստ է հրաժարվել ցանկացած քաղցրավենիքից, զբոսանքից ու նույնիսկ՝ քնից: Ուստի, գիտական պահանջարկ կա բացահայտել օժտված երեխաների ուժեղ և թույլ կողմերը, վերջինիներիս հետաքրքրություններն ու նախասիրությունները, ճշգրիտ ուղիներ որոնել նրանց պատշաճ ուսուցման և դաստիարակման համար, ցույց տալ, թե ինչպես կարելի է աջակցել նման երեխաներին, ինչպես անել, որ վերջիններս հասարակության լիիրավ ու լիարժեք անդամը դառնան և նպաստել նրանց տաղանդի դրսևորմանը: Երը նշված խնդիրներին էական լուծումներ տալուց առաջ պետք է հաշվի առնել, որ մերօրյա տեսական ընկալմամբ օժտվածությունը դիտվում է որպես մի խրթին հոգեբանական երևույթ, որն իր մեջ ներառում է թե անհատի ողջ էությունը, թե վերջինիս ինտելեկտի (մտավոր կարողությունների) առանձնահատկությունը: Օժտվածության բացահայտումը կախված է թե սոցիալական իրավիճակից, թե որոշակի ֆիզիկական առանձնահատկություններից: Հարկ է նշել, որ օժտվածությունը, որպես երևույթ, դեռևս շատ «բաց»(չբացահայտված) կողմեր ունի, չկան հատուկ կամ հաստատված որևէ կանոններ, չափանիշներ, որոնցով հստակ հնարավոր կլինի կողմնորոշվել՝ արդյո՞ք այս կամ այն երեխան օժտված է, թե ոչ: Ուստի օժտվածության սահմանումը չի կարող միանշանակ լինել, քանի որ կան բազում «բայց»-եր վերջինիս հետ կապված:

Հայաստանում օժտվածության երևույթը, բարեբախտաբար, առկա է, և թեպետ շատ չեն օժտված երեխաներով զբաղվող հետազոտական կենտրոններն ու հաստատությունները, Երևանում գործում է Ա. Շիրակացու անվան ճեմարանը, որն իր բնույթով փորձարարական է և համարվում է տաղանդավոր ու բարձր մտավոր ունակություններ ունեցող երեխաների կրթօջախ:

Մեր առջև խնդիր ենք դրել հետազոտել օժտված երեխաների հիմնական առանձնահատկությունները՝ օգտագործելով վերոհիշյալ հաստատության բազան: Երկու ամսվա ընթացքում հատուկ թույլտվությամբ եղել ենք ճեմարանում, հետևել դասերի ընթացքում օժտված երեխաների ցուցաբերած վարքին, տարաբնույթ հետազոտություններ անցկացնել նրանց հետ և տվյալներ հավաքել թե երեխաների ծնողներից, թե մանկավարժներից ու ճեմարանի հոգեբաններից: Ուշադրության կենտրոնում են եղել Ա. Շ. ճեմարանի կրտսեր դպրոցի սաները (6-12 տարեկան), որոնցից 5-ը դրսևորել են օժտվածության առանձնահատկություններ: Նրանցից մեկի մասին գրանցած բոլոր տվյալները ստորև ներկայացված են աղյուսակի տեսքով: Փաստենք, որ օժտվածության բացահայտման հատուկ նպատակ չենք հետապնդել, բավարարվել ենք մանկավարժի և ծնողի՝ երեխայի անձին տված նկարագրությամբ, ուսման առաջադիմությամբ՝ հիմք ընդու-

նելով մտավոր ակտիվությունը, տարաբնույթ ընդունակությունների դրսևորումները և դրանց զարգացման բարձր մակարդակը:

Հարկ է նշել, որ հետազոտություններ կատարելիս հաշվի են առնվել ու գրանցվել են օժտված երեխաների տարիքը, սոցիալական վիճակը, ընտանեկան մթնոլորտը, մանկավարժի, հոգեբանի և ծնողի կարծիքը երեխայի մասին, առողջական վիճակը և այլ տեղեկություններ: Հավելենք նաև, որ հետազոտություններն իրականացնելիս օգտագործել ենք հիմնականում դիտման մեթոդը, զրույցը, գործունեության արդյունքների վերլուծման մեթոդը:

Անուն, Ազգանուն	Սողոմոնյան Արսեն
Ծննդյան թիվ	26.10.2000թ.
Ընտանիքի կազմ	Հայր, մայր, 1 տղա, 1 աղջիկ
Ընդհանուր տեղեկություններ ծնողների մասին	Հայրը մասնագիտությամբ սեյսմիկ ինժեներ է, ներկայումս՝ դասախոս: Մայրը՝ մաթեմաթիկոս, չի աշխատում: Ապրում են 2 սենյականոց բնակարանում: Երեխան ունի իր անհատական գրասեղանը, առանձին մահճակալը: Ընտանիքի ֆինանսական վիճակը՝ լավ
Մանկավարժի և հոգեբանի կարծիքը երեխայի մասին	Երեխան ունի լավ հիշողություն, կազմակերպված է, խիստ պարտաճանաչ: Սակայն լինում են դեպքեր, երբ կոնֆլիկտային իրավիճակներում ունենում է հուզական պոռթկումներ
Ծնողի նկարագրությունը	Ունի վառ երևակայություն, բանավոր յուրահատուկ արտաբերումներ, նախաձեռնող է և ստեղծագործող, սիրում է նկարել, խոսքով բացատրել մտքերն ու զգացողությունները: Երազում է դառնալ թագավոր, ունենալ շքեղ պալատ:
Երեխայի վարքը	Հիմնականում հանգիստ է, սակայն շատ ուշ է մտերմանում, սիրում է առարկել, անվերջ իրենը պնդել, հաճախ է հայտնվում կոնֆլիկտային իրավիճակներում
Անձնական նկատառումներ	Լավ ստեղծագործում է, սակայն հանձնարարվածից հաճախ է շեղվում, դասի ընթացքում ամբողջովին ներգրավվում է և գերազանց է սովորում, հաճախ է խորանում երկրորդական, դետալային նկարագրությունների մեջ:

Երեխային հիմնականում օգնում է մայրը: Մոր հղիությունն ու ծննդաբերությունն ընթացել է լավ: Արամը խոսել սկսել է 2 տարեկանից, քայլել 13 ամսականում, նախադպրոցական տարիքում հաճախել է լողի: Ծնողները երեխային խրախուսում են խոսքերով, նվերներով, պատժում՝ հանդիմանելով, հաճույքից զրկելով: Երբ Արսենինին հանձնարարվեց նկարել իր դասարանը, նկարեց ամենայն մանրամասնություններով: Շատ մանրախնդիր է: Վերլուծելով այս երեխայի վարքը, կարողությունները, մտավոր ունակությունները, սոցիալական վիճակն, համապատասխան տեղեկությունները վերջինիս մասին՝ հանգել ենք հետևյալ եզրակացության. Արսենը կրտսեր դպրոցի

ամենաօժտված սանն է, շատ արտիստիկ է, ունի պատկերավոր մտածողություն: Արսենի հանդեպ անհրաժեշտ է խիստ հետևողական լինել, զգույշ խոսել ու վերջինիս հարցերին տալ սպառիչ պատասխաններ: Նրան հնարավոր չէ ուշադրությունից դուրս պահել, խաբել կամ հիմարեցնել: Նա զգուշորեն վերլուծում է իր հասցեին ուղղված յուրաքանչյուր խոսք, երբեք ավելորդ ոչինչ չի ասում ու անում: Հետազոտության ընթացքում, նպատակ դնելով պարզել Արսենի կրեատիվության մակարդակը, վերջինիս հանձնարարվեց գրատախտակին պատկերել մաթեմատիկական խնդիրը: Ի զարման բոլորի, Արսենը պատկերեց խնդիրը ամենայն մանրամասնություններով: Կարելի էր եզրակացնել, որ այս երեխան շատ պահանջկոտ է ոչ միայն սեփական անձի նկատմամբ, այլ իր շրջապատի, ընտանիքի, ուսման: Կարծում ենք, որ Արսենի հետ արտահերթ պետք է աշխատի մանկավարժը, որպեսզի վերջինիս համար հանրակրթական դպրոցի ուսումնական դասընթացը անհետաքրքիր ու տաղտկալի չդառնա:

Հարկ չհամարելով մանրամասնել հետազոտված մյուս օժտվածների նկարագրերը՝ ներկայացնենք արված եզրակացությունները.

- օժտված երեխաների կրթության և դաստիարակության հիմնախնդիրը մանկավարժության և հոգեբանության արդիական, վիճահարույց հիմնախնդիրներից է, որը լուրջ հետազոտության և մեկնաբանման կարիք ունի.
- օժտված երեխաները, առանձնանալով իրենց տարաբնույթ ընդունակություններով և հոգեբանական առանձնահատկություններով, զգում են ինչպես ընտանիքի, այնպես էլ դպրոցի և հասարակության աջակցության կարիքը, ինչը մեր հասարակության կողմից հատկապես անտեսված է.
- օժտված երեխաները իրենց գործունեության ընթացքում ունենում են սոցիալական հարմարման, միջանձնային շփման խնդիրներ.
- օժտված երեխաների հուզական ոլորտի զարգացումը՝ այսինքն հուզական, ինտելեկտի ձևավորումը իր տեմպերով զիջում է մտավոր զարգացմանը, որը բերում է անհամամասնությունների.
- օժտված երեխաների՝ բացառիկ ընդունակություններով օժտված լինելու փաստը դեռևս չի նշանակում միայն դրական երևույթների առկայություն, այն իր հետ առաջ է բերում տարաբնույթ մանկավարժական և հոգեբանական հիմնահարցեր, որոնք չլուծվելու դեպքում կարող են պայմանավորել նաև բացասական երևույթներ.
- հավասարապես մանկավարժական միջամտության և նպատակաուղղված գործունեության կարիք են զգում ինչպես չառաջադիմող աշակերտները, այնպես էլ արտակարգ ընդունակություններով երեխաները.
- օժտված երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացի ճիշտ կազմակերպումը ժամանակի պահանջներից է, քանի որ քաղաքակիրթ միտքը ուղղորդում են հենց տաղանդավոր մարդիկ, և անթույլատրելի է ցանկացած անփութություն մտավոր ռեսուրսների նկատմամբ: